ՏՈՒԺՈՂԻ ՀԵՏ ՀԱՇՏՎԵԼԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԻՄՔ

Նելլի Աշրաֆյան
ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ

Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատման բնույթը հասկանալու համար հարկավոր է ուշադրություն դարձնել այն բանին, որ այն, սահմանված լինելով քրեական իրավունքում, անմիջականորեն մուտք է գործում նաև քրեական դատավարություն[1]: Քրեական պատասխանատվությունից ազատում հնարավոր չէ միայն նյութական իրավունքի միջոցներով. այն կարիք ունի նաև դատավարական իրավունքի: Անհրաժեշտ է իմանալ ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի նորմի իրացման ալգորիթմը՝ քրեական պատասխանատվությունից ազատելը կիրառելու համար: Այս տեսանկյունից կարելի է ասել, որ քրեական օրենսդրության նշյալ նորմը ծագումնաբանական կապ ունի քրեադատավարական իրավունքի նորմերի հետ: Դա հատուկ է ոչ միայն Հայաստանի, այլև մի շարք այլ երկրների օրենսդրություններին և ընդհանուր առմամբ մարմնավորում է քրեական իրավունքում և քրեական դատավարությունում գոյություն ունեցող փոխադարձ կապը: Դրա էությունն այն է, որ քրեական իրավունքի նորմը կարող է կյանքի կոչվել քրեադատավարական իրավունքի նորմերի միջոցով, որոնց հիման վրա հստակեցվում է գործողությունների միանգամայն որոշակի հաջորդականությունը: Քրեական դատավարության շնորհիվ քրեական իրավունքի նորմերը գործում են, իրացվում են օբյեկտիվ իրականության մեջ: Այս առումով հարկ է նշել քրեական իրավունքում տուժողի հետ հաշտվելիս քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի հարազատությունը քրեական դատավարությունում մասնավոր հետապնդման ինստիտուտի հետ[2]: Մասնավոր հետապնդումը ենթադրում է, որ քրեական հետապնդում հարուցվում է միայն տուժողի դիմումի հիման վրա և դադարեցվում է տուժողի հետ հաշտության հասնելու դեպքում: Տուժողի կամքն այստեղ պայմանավորում է քրեական հետապնդման ընթացքը[3]: Այսպես, համաձայն ՀՀ քր.դատ.օր.-ի 36 հոդվածի՝ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվում են տուժողի հետ հանցավոր անձի հաշտության դեպքում: Այստեղ նմանություն կա տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու և մեղադրյալի, կասկածյալի հետ տուժողի հաշտվելու դեպքում քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու միջև: Այդուհանդերձ, նմանությունը դեռ նույնություն չէ: Դրանք, ըստ էության, իրավունքի թեև շատ մոտիկ, բայց տարբեր ինստիտուտներ են:

---

[1] Տե՛ս **Шараева Я.А.** Сравнительный анализ института примирения и медиации в уголовном процессе // Юридическая наука и практика: Вестник Нижегородской академии МВД России. - Нижний Новгород: Изд-во Нижегор. акад. МВД России, 2014, № 2 (26), էջ 294-296:

[2] Տե՛ս **Майорова Л.В.** Понятие примирения в уголовном процессе // Медиация в условиях кризиса: теоретический и практический аспекты: материалы региональной научно-практической конференции (г. Красноярск, 26 марта 2010 г.). - Красноярск, 2010, էջ 53-56:

[3] Տե՛ս **Стойко Н.Г.** Стратегия примирения и медиация в уголовном процессе, նույն տեղում՝ էջ 77-78:

Այս հարցի հետ կապված ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հաշտության քրեաիրավական և քրեադատավարական կառուցակարգերը չեն նույնանում: Դրանք տարբերվում են մի շարք հատկանիշներով: Այսպես՝

ա) ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով ամրագրված քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքը նյութաիրավական բնույթ ունի, որի կիրառման դատավարական հիմքն է քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածը: Ինչ վերաբերում է մասնավոր մեղադրանքի ինստիտուտին, ապա այն քրեադատավարական բնույթ ունի[1], որի հիմքով քրեական հետապնդման դադարեցումը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,

բ) այն պայմաններում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում առկա են 100-ից ավելի ոչ մեծ ծանրության հանցակազմեր, ՀՀ քրեական դատավարության 183-րդ հոդվածում սահմանված են ոչ մեծ ծանրության 26 հանցակազմ: Բացի այդ, նույն հոդվածով նախատեսված է նաև միջին ծանրության 2 հանցակազմ: Այլ խոսքով՝ եթե մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործի վարույթը կարճելը հնարավոր է միջին ծանրության որոշակի, ինչպես նաև սահմանափակ թվով ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը կարող է կիրառվել միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում,

գ) ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածում սահմանված է, որ անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, դրան համապատասխան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ վարույթն իրականացնող մարմինները կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված է, որ քրեական գործի վարույթը «ենթակա է կարճման»: Այսպիսով, օրենսդիրը հստակ սահմանել է, որ մասնավոր մեղադրանքի գործերով կողմերի հաշտության դեպքում իրավակիրառ մարմինը պարտավոր է կարճել քրեական գործով վարույթը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված՝ տուժողի հաշտվելու դեպքում կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից՝ դադարեցնելով քրեական հետապնդումը և կարճելով քրեական գործի վարույթը:

ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հաշտության քրեաիրավական և քրեադատավարական ինստիտուտները համապատասխանաբար «անձ և պետություն» ու «անձ և տուժող» քրեաիրավական վեճի հաղթահարման կառուցակարգեր են[2]:

Այսպես, մասնավոր հետապնդումը, ըստ ՀՀ քր. դատ. օր.-ի 183 հոդվածի, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով, 114-րդ հոդվածի 1-ին մասով, 115-րդ հոդվածի 1-ին մասով, 116-րդ հոդվածի 1-ին

---

[1]Ճիշտ է, մասնավոր մեղադրանքի հիմքերն ամրագրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 36-րդ և 183-րդ հոդվածներով, բայց կարծում ենք, որ դրանք ունեն նաև իրենց քրեաիրավական հիմքերը: Քրեական օրենսդրության մեջ նշված գործերով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի հաշտեցման իրավական կարգավորման բացակայությունը խոսում է օրենսդրական բացի մասին: Հարկ է նշել, որ այս բացը վերացվում է ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծով, մասնավորապես՝ Նախագծի 86-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործությունից տուժած անձի բողոքի հիման վրա հարուցվող քրեական հետապնդման դեպքում՝ հանցագործությունից տուժած անձի, նրա շահերի պաշտպանության պարտականություն ունեցող անձի կողմից բողոքից հրաժարվելու դեպքում հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից բացառությամբ սույն օրենսգրքի հոդված 16-ի 2-րդ մասով սահմանվածեպքերի»:

[2]Տե՛ս Տ. Առաքելյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2016թ. մարտի 30-ի որոշումը, ԵԱՔԴ/0217/01/14:

մասով, 117-րդ հոդվածով, 118-րդ հոդվածով, 120-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 121-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 124-րդ հոդվածի 1-ին մասով, 128-րդ հոդվածի 1-ին մասով, 137-րդ հոդվածի 1-ին մասով, 158-րդ հոդվածի 1-ին մասով, 174-րդ հոդվածով, 177-րդ հոդվածի 1-ին մասով, 178-րդ հոդվածի 1-ին մասով, 179-րդ հոդվածի 1-ին մասով, 181-րդ հոդվածի 1-ին մասով, 183-րդ հոդվածի 1-ին մասով, 184-րդ հոդվածի 1-ին մասով, 185-րդ հոդվածի 1-ին մասով, 186-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 197-րդ հոդվածով, 213-րդ հոդվածի 1-ին մասով, 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Հաշտությունը թույլատրվում է մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը: Միևնույն ժամանակ, ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածը ներառում է հանցագործությունների շատ ավելի մեծ ցանկ, ըստ որոնց՝ մեղավոր անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից տուժողի հետ հաշտվելու դեպքում. դրանք բոլորը ոչ մեծ ծանրության հանցագործություններն են: Ընդ որում, պետք է նկատել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածը, որը կոչված է ապահովելու ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի կիրառությունը, ըստ էության որևէ էական առաձնահատուկ կարգավորում չի բովանդակում, բացի քրեական օրենսդրությանը հղում կատարելուց:

Տվյալ ինստիտուտը միջձյուղային է, քանի որ ընդգրկում է ինչպես քրեական, այնպես էլ քրեադատավարական իրավունքները: Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու դատավարական ձևը պետք է մանրամասն կարգավորվի քրեադատավարական օրենսդրությամբ, և դրա էությունը պետք է լինի քննիչի կամ դատարանի որոշման կայացումը:

ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի նորմը կառուցված է այնպես, որ հաշտեցումը քրեական պատասխանատվությունից ազատելու միակ հիմքը չէ: Դրանից զատ որպես հիմքեր նշված են նաև վնասը հատուցելն ու պատճառված վնասը այլ կերպ հարթելը և պայմանը՝ հանցագործության ոչ մեծ ծանրության լինելը: Վերոնշյալ պայմանն ու հիմքերը նաև պայմանավորում են քրեական պատասխանատվությունից ազատելու և հաշտության տեսակն ու բնույթը, ինչին պետք է հասնեն վեճի կողմերը: Ինչ վերաբերում է պայմանին, ապա դրա էությունն այն է, որ ոչ մեծ ծանրության հանցագործությունները բնակչությունը հաճախ ընկալում է որպես կենցաղային վեճ, որը պետք է լուծվի կենցաղային միջոցներով, այսինքն՝ հենց վեճի կողմերի անմիջական ջանքերով: Նրանք իրենք պետք է ընտրեն այդ վեճը կարգավորելու միջոցներն ու մեթոդները, այսինքն՝ որոնեն հաշտություն: Ոչ մեծ ծանրության հանցագործություններ կատարելու հետևանքով առաջացող վեճերը լուծելու իրողությունների նման ընկալումը բնակչության շրջանում լիովին համապատասխանում է տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական գործ հարուցելուց հրաժարվելու նորմին: Այստեղ հաշտեցումը՝ որպես որոշակի հանգամանքների հետևանքով առաջացած վեճի սովորական կարգավորում, բավականին ներդաշնակ նորմ է: Հիմքը՝ վնասը հատուցելը կամ պատճառված վնասն այլ կերպ հարթելը, նույնպես բավականին համահունչ է հաշտեցմանը: Նշյալ նորմը ձևակերպված է այնպես, որ թույլ է տալիս հանցագործություն կատարած անձին դիմել գործողությունների երկու տարբերակի՝ հատուցել պատճառած վնասը, հարթել պատճառած վնասն այլ եղանակով: Այսինքն՝ կատարված որոշակի հանցագործությամբ և ստեղծված իրադրությամբ պայմանավորված՝ չի բացառվում, որ պատճառված վնասը չհատուցվի, այլ իրականացվեն այլ գործողություններ, որոնցով մեղավորը կհարթի իր պատճառած վնասը: Նման այլընտրանքային մոտեցումը փաստացի ընդգծում է այն, որ կարևորը ոչ այնքան այն է, թե ինչ գործողություններ են կատարվել, որքան այն, թե ինչքանով էին անկեղծ դրանք և արդյոք կոնկրետ մեղավոր անձի՝ վնասը հարթելու ցանկության արտացոլումն էին: Տուժողն ինքը պետք է հետևություն անի, թե այդ գործո-

ղությունները որքանով են արժանի այնպիսի գնահատականի, որը թույլ կտա հասնել հաշտության այն անձի հետ, որն իր նկատմամբ հանցանք է գործել: Հաշտվել, թե ոչ՝ տուժողը որոշում է ոչ միայն այն բանի հիման վրա, թե հատկապես ինչ գործողություններ են կատարվել, այլև հիմք ընդունելով այն, թե որքանով էին այդ գործողություններն անկեղծ, հետևաբար և՝ հանցանք գործած անձի ուղղվելու մասին վկայող: Բացի այդ, պետք է նշել նաև, որ վերոնշյալ բոլոր երեք հիմքերի առկայությունը բնավ չի ենթադրում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պարտավորություն: Նշյալ հնարավորությունը կարող է այդպես էլ չօգտագործվել: Դա հետևում է նշյալ նորմում «...կարող է ազատվել» ձևակերպումից: Այսինքն՝ նա կարող է ազատվել, կարող է և չազատվել: Դա պետք է որոշի համապատասխան իրավասու, օրենքով սահմանված պաշտոնատար անձը կամ մարմինը: Այս հանգամանքը հաստատվում է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի հետևյալ դիրքորոշմամբ. «ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված պահանջների առկայությունը դեռևս չի հանգեցնում անձին քրեական պատասխանատվությունից ազատելուն, այդ պահանջների առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը քննարկում է անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը և օժտված է հայեցողական լիազորությամբ»[1]:

Ինչպես վերը նշվեց, հաշտություն ձեռք է բերվում այն ժամանակ, երբ տուժողը նկատում է հանցանք գործած անձի զղջումը: Զղջումը կարևոր պահ է, որը տուժողն ընկալում է որպես մեղավոր անձի վերաբերմունքի փոփոխություն իր կատարած հանցագործության նկատմամբ[2]: Պարզելով զղջման առկայությունը՝ տուժողը եզրակացնում է, որ հնարավոր է հաշտվել հանցավոր անձի հետ: Ընդհանուր առմամբ, պատճառված վնասը հատուցելը և հարթելը գործողություններ են, որոնք վկայում են, որ մեղավորը զղջում է իր կատարածի համար: Ուստի միանգամայն հնարավոր է նաև այն, որ տուժողին համոզի մեղավորի զղջալը առանց վնասի հատուցումը հաստատող գործողությունների: Նա կարող է հետևություններ անել՝ վերլուծելով մեղավորի այլ գործողություններ, որոնք վերջինս նախաձեռնել է իր պատճառած վնասը հարթելու համար: Ակներև է, որ դրանք կարող են լինել ամենաբազմազան գործողություններ[3]: Առավել ևս, որ վնասի հասկացությունը բավականին լայն է: Վնասը կարող է լինել ոչ միայն նյութական, այլև բարոյական, ուստի գործողություններն էլ կարող են լինել տարբեր: Դա կարող է լինել վնասի նյութական փոխհատուցում, կարող է լինել և գործողությունների համակարգ՝ ուղղված տուժողին բարոյապես աջակցելուն, նրա հոգեկան հավասարակշռությունը վերականգնելուն: Ուստի հաշտվելու համար ոչ բոլոր դեպքերում է անհրաժեշտ հատուցել պատճառված վնասը: Ընդ որում, ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածում զղջման մասին չի հիշատակվում: Դրա մասին նշվում է ՀՀ ՔՕ-ի 72-րդ հոդվածում՝ «քրեական պատասխանատվությունից ազատում գործուն զղջման դեպքում»: Այս նորմից երևում է, թե որ գործողություններն են վկայում գործուն զղջալու մասին: Դրանց շարքին են դասվում՝ մեղայականով ներկայանալը, հանցագործությունը բացահայտելուն օժանդակելը, վնասը հատուցելը կամ այլ եղանակով վնասը հարթելը: Ընդ որում, ինչպես ՀՀ քրեական օրենսդրությունում, այնպես էլ ՌԴ քրեական օրենսդրությունում չի սահմանվում, որ տվյալ դեպքում գործուն զղջալու արդյունքում պետք է ձեռք բերվի հաշտություն: Քրեական պատասխանատվությունից ազատելու որոշում կայացնելու համար այստեղ բավարար է միայն նշյալ գործողությունները կատարելը: Այ-

---

[1] Տե՛ս Տ. Առաքելյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2016թ. մարտի 30-ի որոշումը, ԵԱՔԴ/0217/01/14:

[2] Տե՛ս **Гришин Д., Сабанин С.** Применение судом института деятельного раскаяния // Уголовное право. - М.: АНО "Юридические программы", 2015, № 2, էջ 52-56:

[3] Տե՛ս **Авсеницкая К.В.** Границы деятельного раскаяния и их отражение в уголовном законе // Вестник Российской правовой академии. - М.: РПА МЮ РФ, 2014, № 1, էջ 43-47:

սինքն՝ տուժողը չի մասնակցում ՀՀ ՔՕ-ի 72-րդ հոդվածով քրեական պատասխանատվությունից անձին ազատելու հնարավորության մասին հարցի լուծմանը: Միևնույն ժամանակ ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի շրջանակում քրեական պատասխանատվությունից անձին ազատելու հարցը լուծելու համար տուժողի կարծիքը կարևոր է, քանի որ հենց նա է որոշում՝ հաշտվի՞ հանցանք գործելու մեջ մեղավոր անձի հետ, թե՞ ոչ: Այսինքն՝ հաշտեցումը կարելի է և պետք է դիտարկել որպես տուժողի մասնակցության ձև մեղավոր անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցի լուծմանը: Տուժողն է որոշում, մասնավորապես, մեղավոր անձի խոսքերի, գործողությունների և ներողության անկեղծության չափը և այն, թե նա իրոք զղջում է իր կատարած հանցանքի համար և այլևս նման արարք թույլ չի տա: Թեև քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելու համար վերջին խոսքի իրավունքը այնուամենայնիվ վերապահված է լիազորված պաշտոնատար անձանց, սակայն հաշտեցում չի կարող տեղի ունենալ առանց տուժողի համապատասխան կամահայտնության: Դրանում ևս դրսևորվում է հաշտեցման իրավական բնույթը:

Վերոնշյալից հետևում է, որ հաշտեցումը հիմնված է կողմերի կամավորության վրա, որոնք ձգտում են հասնել դրան, և հանցանք գործած անձի նախաձեռնողության վրա: Հանցանք գործած անձի նախաձեռնողությունը նրա ուղղվելու և հետագայում նոր հանցագործություններ չկատարելու գրավականն է: Դրա երաշխիքը նաև կամավորությունն է: Ընդ որում, կարևոր է, որ հաշտեցումը տուժողի և հանցանք գործած անձի միջև հաստատված այն հարաբերություններն են, որոնք բնութագրվում են փոխըմբռնմամբ ու համագործակցության ձգտմամբ՝ ուղղված կատարված հանցագործության բացասական հետևանքները վերացնելուն: Նշյալ հարաբերություններն առավել արգասավոր են կատարված համապատասխան հանցագործությունը բացահայտելու փուլում, քանի որ այդ ժամանակ մեղավորը կատարում է վնասը հատուցելուն կամ պատճառված վնասը հարթելուն ուղղված գործողություններ: Հետագայում ևս դրանք պահպանվում են, բայց արդեն մեղավոր անձը զերծ է մնում որևէ գործողություն կատարելուց, որը տուժողը կարող է ընկալել որպես թշնամական, ագրեսիվ: Այդ հարաբերությունների էությունը նույնպես նոր հանցագործություններից կամ իրավախախտումներից զերծ մնալն է: Տվյալ հարաբերությունների առանձնահատկություններից է այն, որ դրանք կատարված հանցագործության հետևանքով առաջացած վեճը լուծելու ձև են: Այդ հարաբերությունների հիմքը դրանց սուբյեկտներից մեկի նախաձեռնողությունն է, որը ձգտում է հարթել իր մեղքը: Ընդ որում, նշյալ հարաբերությունների հիմքում ընկած է մեղավորի ուղղվելու ձգտումը՝ փոխելով անձնական գնահատականն իր ոչ իրավաչափ գործողություններին: Այդ հարաբերություններում կարևոր է դրանց կանխարգելիչ նշանակությունը, քանի որ դրանք արդեն իրենց գոյության փաստով կանխում են նոր հանցագործություններ կատարելու հնարավորությունը: Բացի այդ, վարույթն իրականացնող մարմինը նման հարաբերությունների առկայության դեպքում քննություն իրականացնելիս կարող է ակնկալել այդ իրավահարաբերությունների մասնակիցների օժանդակությունը: Այս ամենից ելնելով՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածի հիմքը հաշտեցման իրավահարաբերություններն են, որոնց առկայությունը թույլ է տալիս լուծել հանցագործություն կատարելու մեջ մեղավոր համապատասխան անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորության հարցը:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածը կիրառելի է միայն այն հանցագործությունների նկատմամբ, որոնցում կա իրական տուժող: Սրանից հետևում է, որ եթե կատարվել է հանցագործություն, որն ունի ձևական հանցակազմ, մի շարք դեպքերում քրեական օրենքի նշյալ նորմով ազատել հնարավոր չէ: Դա պայմանավորված է այն բանով, որ ձևական կազմը չի ենթադրում հետևանքների առկայություն: Եթե չկա հետևանք, չկա նաև տուժող, որի հետ հարկ լինի հաշտվել: Այս իմաս-

տով ՀՀ ՔՕ-ի 73-րդ հոդվածը կիրառելն անհնար է: Այս հանգամանքը ևս ի ցույց է դնում տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու բնույթը:

Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել այն բանին, որ տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելը կարելի է կիրառել միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով (ՀՀ ՔՕ-ի 73 հոդված): ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծով այն կիրառվում է ոչ միայն ոչ մեծ ծանրության, այլև միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով: Այսինքն՝ այստեղ քրեական օրենքի ընդգրկումն անհամեմատ լայն է: Այն լիովին համապատասխանում է մարդասիրության սկզբունքին, քանի որ կազատի մեղավորին չափից ավելի խիստ միջոցներից, որոնք օգուտի փոխարեն կարող են վնասել և բացասաբար անդրադառնալ նրա վրա: Բացի այդ, դրա կանխարգելիչ արդյունքը շատ ավելի մեծ կլիներ, քանի որ կհանգեցնի անձնավորության ավելի արմատական փոփոխությունների:

Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու բնույթն այն է, որ հնարավոր լինի հասնել պատժի նպատակներին առանց այն կիրառելու: Ընդ որում, պետությունը ձեռք է բերում ոչ միայն արդարադատության իրեն ցանկալի արդյունքը, այլև էական տնտեսական օգուտ, միջոցների տնտեսում, որոնք այլ պարագայում պետք է ուղղվեին պատիժն ի կատար ածելուն:

РОЛЬ ПРИМИРЕНИЯ С ПОТЕРПЕВШИМ КАК ОСНОВАНИЕ ОСВОБОЖДЕНИЕ ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

Нелли Ашрафян

Старший прокурор управления по делам о преступлениях коррупционной и экономической направленности Генеральной прокуратуры РА

Данная статья посвящена месту и роли примирения с потерпевшим как основания освобождение от уголовной ответственности. Оно в работе представлен как междисциплинарный институт, поскольку охватывает как уголовное, так и уголовно-процессуальное право. Институт примирения с потерпевшим был представлен с точки зрения как частного, так и публичного обвинения.

Примирение можно рассматривать как форму участия потерпевшего в решении вопроса об освобождении виновного от уголовной ответственности. В этом проявляется правовая природа примирения.

ROLE OF RECONCILIATION WITH THE VICTIM AS A BASIS FOR EXEMPTION FROM CRIMINAL LIABILITY

Nelli Ashrafyan
Senior Prosecutor of the Department for Combating Corruption and Economic Crimes of the General Prosecutor's Office of the Republic of Armenia

This article is devoted to the place and role of reconciliation with the victim as a basis for exemption from criminal liability. It is represented in the work as an interdisciplinary institute, since it covers both criminal and criminal procedure law. The institution of reconciliation with the victim was presented from the point of view of both private and public prosecution.

Reconciliation can be considered as a form of participation of the victim in the decision on the issue of exemption from criminal responsibility. This is the legal nature of reconciliation.

Բանալի բառեր – *տուժող, հաշտվել, քրեական պատասխանատվությունից ազատել, վնասը հատուցել, գործուն զղջալ*

Ключевые слова: *потерпевший, примерения, освобождение от уголовной ответственности, возмещение ущерба, деятельным раскаяние*

Key words: *victim, reconciliations, exemption from criminal liability, compensation for damage, active repentance*